Արձանագրություն N 3
«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 23.08.2021թ. ժամը 15:00-ին, ք. Երևան, Աճառյան 2, 212 սենյակ հասցեում

Գնահատող հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝
- Մ. Մկրտչյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝
- Ն. Սարգսյանց
- Ա. Սողոմոնյան

Քարտուղար՝ Էլինա Պողոսյան

«ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Է. Պողոսյան)

1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
2.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ **«ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31»** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
3. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
4. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

1. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Է. Պողոսյան)

1.1 **23.08.2021թ., ժամը 15:00-ի** կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին կազմակերպված բանակցություններին մասնակցելու համար ծանուցված մասնակիցներից ներկայացավ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ն և 6-րդ չափաբաժնի մասով առաջարկված ընդհանուր գինը 24 850 000 /քսանչորս միլիոն ութ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱՀՀ-ն, նվազեցրեց սահմանելով՝ 11 165 000 /տասնմեկ միլիոն հարյուր վաթսունհինգ հազար/ ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Մնացած չափաբաժինների մասով մասակիցների կողմից առաջարկված գները թողնվեցին առանց փոփոխության:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Է. Պողոսյան)

2.1 **23.08.2021թ** հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, armeps (www.armeps.am) էլեկտրոնային գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ **«ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31»** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել հետևյալ մասնակիցներին՝

1) 1-ին, 6-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով՝ «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ին
2) 2-րդ չափաբաժնի մասով՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2.2 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31» ծածկագրով ընթացակարգը 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով հայտարարվեց չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ կետը (ոչ մի հատ չի ներկայացվել):

2.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել՝ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

2.4 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանվել է 5 օրացուցային օր:

2.5 Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետը լրանալուց հետո ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել կից գրությամբ պայմանագրի նախագիծը երկու օրինակից, ինչպես նաև որակավորման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր), պայմանագրի կատարման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Է. Պողոսյան)

3.1 «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

4. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Է. Պողոսյան)

4.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Է. Պողոսյան)

5.1 «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31»» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագրեր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Աճառյան 2, 212 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Մկրտչյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Ն. Սարգսյանց

_____ Ա. Սողոմոնյան

հանձնաժողովի քարտուղար՝ _____ Է. Պողոսյան